

ԿՈՒՄԱՅՐԻԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

1990 թ. լրացավ Կումայրիի Յոթվերք կամ Սուրբ Աստվածածին եկեղեցու՝ ճարտարապետական այս յուրահատուկ հուշարձանկոթողի և ուխտակատարի մեկ դարը:

Տակավին Ս. Ներսես Շնորհալին (1102—1173) հիշատակություն ունի «Ծիրակի թեմ»-ի մասին, որը կրկնվել է 1650-ական թվականներին: Սակայն թեմիս համբավը տարածվել է 19-րդ դարում՝ Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերի ընձեռած հնարավորություններով, երբ Արևմտյան Հայաստանից Ախուրյանի այս ափ են անցնում զանգվածաբար շուրջ 130 հազար հայեր: Խորհրդային շրջանում Ծիրակի թեմը երկրորդն էր Հայաստանում: Ավաղ հավաստի տեղեկություններ չունենք Ծիրակի թեմի սկզբնավորման ստույգ թվականի մասին, կան մի քանի աղոտ հիշատակություններ, ինչպես օրինակ «Ի կողմն Երևանու Ծաղկաձորն ի սահմանս Աղիստեփոս Ծիրակայ թեմն Բամբակու ձորն և Լոռու թեմն» («Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, 10, էջ 84):

1835 թ. ցարական կառավարության ներկայացուցիչ Ռոգենը, պատասխանելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովհաննես Կարբեցու (1831—1842) նամակին, թույլ է տալիս հիմնելու չորս եկեղեցական թեմեր, որը սակայն այդպես էլ չի իրականացվում:

«Արարատ» ամսագրից տեղեկանում ենք, որ 1853 թ. Ծիրակն արդեն փոխթեմակալություն էր՝ Երևանի կոնսիստորիայի ենթակայության ներքո: Եվ այս կարգավիճակը շարունակվեց մինչև մեր օրերը, երբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց Ծիրակը թեմ դարձնել:

Անցյալ դարի կեսերին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը այցելում է Ալեքսանդրապոլ և կատարում Ս. Նշան եկեղեցու հիմնարկեքը (1852), որից հետո դրվում են Ս. Ամենափրկիչ (1859—1875) և Ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցիների հիմքերը (1851—1891):

Ս. Յոթվիրաց եկեղեցու օծումը կատարվում է 1890 թ.՝ երջանկահիշատակ Տ. Սուքիաս եպս. Պարզյանցի կողմից: Ավելի ուշ այս մեծ ուխտատեղին դառնում է առաջնորդանիստ եկեղեցի: Ճարտարապետական իր կառույց-ձևերի մեջ եկեղեցին իր վրա կրում է հունական որոշ ազդեցություն: Այնուամենայնիվ հիմնականն ու տիրապետողն ազգայինն է, որ յուրատեսակ երանգ է ստեղծում: Գեղեցիկ են մանավանդ եկեղեցու արտաքին պատերի, ներսի և դրսի

դոների յուրօրինակ զարդաքանդակները, պատերից կախված սրբապատկերները: Սրբապատկերներից մեկը հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Տիրամայր» կտավն է, որ գետեղված է Եկեղեցու ամենապատվավոր տեղում՝ Ավագ ս. սեղանի ճակատին: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Սուրբ Յոթվիրաց» պատկերը, որը, ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանի Հասանղալայի Ս. Աստվածածին հրուշակավոր վանքի սեփականությունն է եղել: Տեղի հայերի գաղթի ժամանակ այդ հրաշագործ պատկերը վանահայր Պողոս վրդ. Զանլաթյանը իր հետ տարել է Ղանլիջայի Մարմաշենի վանք 1832 թ.: Ըստ ավանդության, դա Ղուկաս ավետարանչի ձեռքի գործն է (մ. թ. Ա դար):

Կարևոր արժեք ունի եկեղեցու նրբակերտ և յուրահատուկ զարդանախշերով դրվագված մոտ մեկդարյա վաղեմությամբ առաջնորդական գահը, որն իր վրա կրում է նրբաոճ եկեղեցական գմբեթների մանրակերտեր: Սակայն այս ամենի կողքին պետք է նշենք, որ չի պահպանվել Շիրակի թեմի առաջնորդների հաջորդականությունը: Առաջին հիշատակված առաջնորդը, ըստ բանահավաք Կարապետ Կոստանյանի դիվանի, եղել է Վարդան եպիսկոպոսը (1862): Նրանից հետո հերթով հիշատակվում են առաջնորդներն ու տեղապահները, որոնց թվում հարկ է հիշել Մովսես արքեպիսկոպոսին, Գևորգ եպս. Սուրենյանին (հետագայում՝ կաթողիկոս), Մակար Բարխուդարյանցին, Ընձակ վրդ. Յաղջյանին, Արտակ վրդ. Սմբատյանին և ուրիշներին: Մեր դարի 30-ական թվականներին Շիրակի թեմում տիրում է ամլություն, և միայն Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի մեծ ջանքերի շնորհիվ է վերսկսվում առաջնորդությունը: Վերջին երկու տասնամյակում թեմի առաջնորդությունը ստանձնել է Նարեկ եպս. Շաքարյանը:

1947 թ. անընդմեջ եկեղեցում գործում է քառաձայն երգչախումբ: Եկեղեցու երգչախումբը հաճախ համերգներով հանդես է եկել տարբեր բեմերում՝ մեր ժողովրդին հաղորդակից դարձնելով հոգևոր-եկեղեցական երաժշտությանը: Երգչախմբի աշխատանքներին պատեհ առիթներով իրենց մասնակցությունն են բերել հայտնի երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը, Վահագն Ստամբոլցյանը, Լուսինե Զաքարյանը և ուրիշներ:

Տարբեր տարիների բարենորոգչական աշխատանքներ են տարվել եկեղեցում հատկապես Վազգեն Ա Կաթողիկոսի շինարարական-վերականգնողական գործունեության երախտաշատ շրջանում: Հնացած փայտե գմբեթը փոխարինվել է քարե գմբեթով, որը վերջին մեծ աղետի ժամանակ փլուզումից փրկեց ողջ տաճարը:

Աստուծո կամեցողությամբ եղեղեցին տարերային երկրաշարժին կուլ չգնաց, ինչպես մեր ժողովուրդը, կարողացավ դիմակայել փորձությանը: Այդ աննկարագրելի օրերին Շիրակի թեմը կարողացավ կազմակերպել իր հավատցյալ ժողովրդի հոգևոր կյանքը՝ հաստատ մնալով իր ազգային-եկեղեցական և պատմական կոչումին:

Ներկայումս ավարտվել են երկու գմբեթների վերականգնման աշխատանքները: Շուտով կհառնի փլատակներից քարե գեղեցիկ զանգակատունը, որի զանգերի ղողանջները Շիրակի մեր ողջ ժողովրդին վերընտին պիտի կոչի հույսի ու հավատի:

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ՇԱՔԱՐՅԱՆ